ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 232

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԱՎԱԶԴ ՊԱԽՐԱՏՈՒՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ)կետի, 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 42-րդ հոդվածի, առաջին մասի 8-րդ կետերի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի առաջին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի վերջին պարբերության պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշումը Արենի համայնքի ղեկավարը *որոշում է.*

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչ Արտավազդ Պախրատուրի Ստեփանյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Արենի համայնքի տարածքում «Վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու» մշտական հանձնաժողովին՝ (նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Եսայան) քաղաքացի Արտավազ Ստեփանյանին վարչական վարույթի գործի քննության համար սույն թվականի սեպտեմբերի 18-ին ժամը 14:30-ին հրավիրել Արենիի համայնքապետարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**